ԿԵՐՊԱՐՎԵՍՏ



2

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԻԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ԱՐԱՔՍՅԱ ԱՆԱՆՅԱՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

2

Հանրակրթական հիմնական դպրոցի
2–րդ դասարանի դասագիրք

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2023

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 373:73/76()075.3
ԳՄԴ 85.10g72
Պ 505

Տպագրվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով

Դասագրքի ստեղծման աշխատանքներին մասնակցել են՝

Լուսինե Ղազարյան
Մարգարիտա Սարիբեկյան

Պ 505 Պետրոսյան Մարիամ, Մանուկյան Մարինե, Անանյան Արաքսյա
Կերպարվեստ 2: Հանրակրթական հիմնական դպրոցի 2–րդ դասարանի դասագիրք / Մ. Պետրոսյան, Մ. Մանուկյան, Ա. Անանյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 64 էջ:

ՀՏԴ 373:73/76()075.3
ԳՄԴ 85.10g72

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.
www.zangak.am/9789939990200
Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

ISBN 978–9939–99–020–0

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023
© Պետրոսյան Մ., 2023
© Մանուկյան Մ., 2023
© Անանյան Ա., 2023
© ՀՀ ԿԳՄՍՆ, 2023

Սիրելի՛ բարեկամ

Մենք կօգնենք քեզ ծանոթանալու կերպարվեստի այբուբենին, տիրապետելու նկարչական տարբեր գործիքների, սովորելու ինքնուրույն նկարել:

Արի՛ միասին գնանք կերպարվեստի զարմանահրաշ աշխարհը, որը լի է հետաքրքիր և ստեղծագործական անակնկալներով:

ՍՏԵՂԾՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 1

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐ

Փորձարկի՛ր նկարչական տարբեր նյութեր:
Ստեղծի՛ր բազմապիսի աշխատանքներ:
Ցուցաբերի՛ր ստեղծագործական մոտեցում:

ԾԱՆՈԹԱՑԻՐ ՆՅՈՒԹԵՐԻՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ

ԹՈՒՂԹ

Թուղթը հանդիպում է մեր առօրյայում ամենուր: Այն օգտագործվում է գրելու, նկարելու, փաթեթավորելու համար:

Գոյություն ունեն թղթի բազմաթիվ տեսակներ: Մենք հաճախ օգտագործում ենք փայտից ստացված թուղթը: Նկարչության համար օգտագործվում են բարակ թուղթը, վատմանը, ջրաներկի թուղթը և ստվարաթուղթը:



Թուղթը կարելի է կիրառել և՛ հորիզոնական, և՛ ուղղահայաց դիրքերով:

Համեմատի՛ր նկարները:

Նանե Գյումիշյան

Մարի Չաթրյան

Թվարկի՛ր առարկաներ և ցո՛ւյց տուր՝ թե որ դիրքով դրանք կպատկերես:

Օրինակ՝

արագիլ՝ ուղղահայաց դիրքով,

ծով՝ հորիզոնական դիրքով:

Մարի Գազիրյանց

Հենրի Մարտիրոսյան

ԹՈՒՂԹ

Կարդա՛

Նկարել եմ մի մեծ պարտեզ,
Պարտեզի մեջ՝ ծառեր պես–պես,
Ծառերի մոտ՝ մի ցանկապատ,
Ցանկապատից շուն է կապած:
Եթե հանկարծ անկարգ Սոսը
Ուզի մտնել մեր պարտեզը,
Շունը հաչի՝ Սոսը փախչի:

Պատկերի՛ր բանաստեղծությունը՝ ընտրելով թղթի դիրքը:

Անհրաժեշտ են՝

թղթաթափոն

թաս

ջուր



ցանց

ՆԱԽԱԳԻԾ

Թղթաթափոններից ստացի՛ր նոր որակի թուղթ:

Քայլ 1. Մանրացրո՛ւ թղթերը, լցրո՛ւ ջրով լի թասի մեջ:
Քայլ 2. Տրորի՛ր ձեռքով կամ հարիչով:
Քայլ 3. Քամի՛ր ցանցի օգնությամբ:
Քայլ 4. Տարածի՛ր ցանցի վրա:
Քայլ 5. Տեղափոխի՛ր հարթ մակերեսի վրա:
Քայլ 6. Չորացրո՛ւ:
Քայլ 7. Նկարազարդի՛ր քո ստեղծած թուղթը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Քայլ 1

Քայլ 2

Քայլ 3

Քայլ 4



Քայլ 5

Քայլ 6

- *Որտեղ է ամենից շատ թուղթ կիրառվում:*
- *Նշիր թուղթը խնայողաբար օգտագործելու օրինակներ:*
- *Ինչ նոր բան սովորեցիր:*
- *Ինչ դժվարությունների հանդիպեցիր:*

ԳԻՏԵՍ, ՈՐ...

Հին ժամանակներից մարդիկ գրելու կամ նկարելու համար ստեղծել են թղթի տարբեր տեսակներ:

Ճապոնիայում հայտնի է մի քանի տեսակի բույսերից պատրաստված Վաշի թուղթը:

ՍԵՎ ԳՐԱՖԻՏԵ ՄԱՏԻՏ

Սև գրաֆիտե մատիտով կառուցում են պատկերներ:

Մատիտի հետքը ջնջվում է ռետինով՝ չվնասելով թուղթը: Սրվում է սրիչով: Մատիտի միջուկը՝ գրաֆիտը, լինում է հաստ և բարակ, փափուկ և չոր:



Եկեք քննարկենք

Այն ամենը, ինչ տեսնում ենք մեր շրջապատում, նյութ է:

Ո՞ր նյութերով կարող ենք ստեղծագործել, ո՞ր նյութերով՝ ոչ:

Պատասխանդ հիմնավորի՛ր:

Անհրաժեշտ են՝

թուղթ

սև գրաֆիտե մատիտ

ռետին

ՆԱԽԱԳԻԾ

Պատուհանից դո՛ւրս նայիր և գրի՛ր այն առարկաների անվանումները, որոնք կտեսնես:

Սև գրաֆիտե մատիտով պատկերի՛ր բոլոր առարկաները մեկ թղթի վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Քայլ 1



Քայլ 2



Քայլ 3



Քայլ 4



Ալբրեխտ Դյուրեր,
«Նապաստակ»

Գծանկարը *գրաֆիկական միջոցներով (գիծ, սփվեր) հարթության վրա ստեղծված պատկերն է:*
Գծանկարը գրաֆիկայի տեսակ է, նաև հիմք նկարչական արվեստի բոլոր տեսակների համար:

Մաքո՛ւր պահիր աշխատանքային տարածքը:
Զգուշորեն վերաբերվիր մատիտներին՝ չկոտրես, ավելորդ անգամ չսրես:

ԳՈՒՆԱՎՈՐ ՄԱՏԻՏՆԵՐ ԵՎ ՅՈՒՂԱՄԱՏԻՏՆԵՐ

Նկարելիս միջավայրն ու պատկերները գունավոր մատիտներով են դառնում գունեղ:

Գունավոր մատիտը փայտե ձող է, որի միջուկն ունի յուղային կամ մոմե հումք: Գունավոր յուղամատիտների մեծ մասը պատված է թղթով:



Անհրաժեշտ են՝

թուղթ

սև գրաֆիտե մատիտ

ռետին

գունավոր մատիտներ

յուղամատիտներ

ՆԱԽԱԳԻԾ

Քայլ 1. Պատկերի՛ր քեզ ծանոթ հեքիաթից որևէ տեսարան:

Քայլ 2. Ընտրի՛ր թղթի դիրքն ու պատկերների չափը:

Քայլ 3. Սկսի՛ր աշխատանքը սև գրաֆիտե մատիտով:

Քայլ 4. Փորձարկի՛ր գունավոր մատիտների հնարավորությունները՝ դրանք տարբեր ուժգնությամբ սեղմելով թղթին:

Սոնե Սարգսյան,
«Ծիտը» հեքիաթի նկարազարդում, յուղամատիտ

Երբ յուղամատիտը հասնում է թղթին, պետք է թուղթը հեռացնել և շարունակել աշխատանքը: Կոտրվելու դեպքում յուղամատիտով հեշտությամբ կարելի է շարունակել աշխատանքը:

Քայլ 5. Փորձիր և բացահայտիր յուղամատիտի հնարավորությունները՝ օգտագործելով և ծայրի մասը, և ամբողջ մակերեսը թղթին քսելով:

Քայլ 6. Աշխատանքդ պահիր պանակում՝ ցուցադրության մասնակցելու համար:

Դավիթ Շահինյան

ԾԵՓՈՆ

Ծեփոնը (պլաստիլին) կավի, մոմի և զանազան չչորացող յուղերի գունավորված խառնուրդից ստացվող փափուկ նյութ է: Օգտագործվում է կուտակելու, ծեփելու, կտրատելու միջոցով փոքր քանդակներ, ծավալային պատկերներ ստեղծելու համար:

Եկեք քննարկենք

Ի՞նչ օրինաչափություն ես տեսնում խխունջի պատյանի մեջ:



Անհրաժեշտ են՝

ծեփոն

ծեփատախտակ

կերտաձող

խոնավ անձեռոցիկ

ՆԱԽԱԳԻԾ

Քայլ 1. Հիշի՛ր քեզ ծանոթ կենդանիներ:

Քայլ 2. Յուրաքանչյուր կենդանու պատկերից առաձնացրո՛ւ որևէ մաս:

Քայլ 3. Կցելով այդ մասերը գունավոր ծեփոնի օգնությամբ՝ ստեղծի՛ր երևակայական *(գոյություն չունեցող)* կենդանու քո տարբերակը:

Քայլ 4. Ներկայացրո՛ւ աշխատանքդ և հիմնավորի՛ր ընտրությունդ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Արսեն Թարոյան

Ծեփոնի հետ աշխատելիս պահպանիր հետևյալ կանոնները

1. Պահիր ծեփոնը փակ վիճակում, որպեսզի այն չչորանա և չկորցնի փափկությունն ու ճկունությունը:
2. Ծեփոնի ուղղանկյուն շերտից կտրիր աշխատանքի համար անհրաժեշտ մասը, իսկ մնացածը պահիր փակ տարայում:
3. Մաքրիր ծեփատախտակը և ձեռքերդ խոնավ անձեռոցիկով, լվացվիր հոսող ջրով:
4. Կերտաձողիկը ևս մաքրիր ծեփոնի հետքերից, որպեսզի հաջորդ աշխատանքներդ լինեն կոկիկ:
5. Փոխանցիր կերտաձողիկը՝ պահելով սուր մասը ափիդ մեջ:

ՍՏԵՂԾՈՒՄ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԱՐՐԵՐ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ՄՈԴՈՒԼ 2

Օգտագործի՛ր կերպարվեստի տարրերը՝ գիծ, գույն, ձև, համաչափություն, ռիթմ:

Ստեղծի՛ր թեմատիկ աշխատանքներ:

ՃԱՆԱՉԻՐ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ «ԱՅԲՈՒԲԵՆԸ»

ԳԻԾ

Կերպարվեստում գծերի շատ տեսակներ կան: Մենք կարող ենք դիտել, թե ինչպես է կետը ձգվում որևէ ուղղությամբ՝ ստեղծելով տարբեր պատկերներ:

Գծերը լինում են ուղիղ, ալիքաձև, կտրտված, կետագիծ, կոր, պարուրաձև, զիգզագաձև, ուղղահայաց, հորիզոնական և այլն:



Միանման գծերը կրկնելով՝ կարելի է ստեղծել գեղեցիկ նախշեր: Գծերի միջոցով կարելի է նաև պատկերել երաժշտություն:

Անհրաժեշտ են՝

թուղթ

սև գրաֆիտե մատիտ

ռետին

գունավոր մատիտներ

թաղքագրիչ

ՆԱԽԱԳԻԾ

Քայլ 1. Քանոնի օգնությամբ ալբոմի էջը բաժանիր մասերի:

Քայլ 2. Ստացված մասերը ձևավորիր գծերի քեզ ծանոթ հնարավոր բոլոր տարբերակներով:

Քայլ 3. Ուշադիր դիտիր ստեղծված պատկերները և գրիր, թե ինչերի ես դրանք նմանեցնում:

Քայլ 4. Աշխատանքդ պահիր պանակում:

Գծի օգնությամբ ստացիր տարբեր դեմքեր և տարբեր տրամադրություններ:

Ստացիր պատկերներ՝ որպես գիծ օգտագործելով գունավոր թելեր:

ԱՇԽԱՏԱՆՔՆ
ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

- ***Կարգի՛ բեր սեղանդ:***
- ***Հավաքի՛ր բոլոր պարագաները:***
- ***Կարգի՛ բեր շուրջդ:***

Գիծ, պարան, լար, սահման, փող, թել, շարք:

ԳՈՒՅՆ





Գույներն առաջանում են, երբ առարկան արտացոլում կամ արձակում է իր վրա ընկած լույսը: Արվեստագետը, գույները համադրելով, ստեղծում է բազմազան պատկերներ:

Գոյություն ունի երեք հիմնական գույն՝ կապույտ, դեղին և կարմիր: Մնացած բոլոր գույները ստացվում են այս երեք գույնի խառնուրդից:

Գույները լինում են տաք և սառը:

Գույներն ունեն երանգներ, որոնք արտացոլում են միևնույն գույնի բաց կամ մուգ աստիճանը:

Անհրաժեշտ են՝

թղթե ափսե

գունավոր մատիտներ

ջրաներկ

վրձին

ջրաման

ՆԱԽԱԳԻԾ

Ստեղծի՛ր քո գունային անիվը

Քայլ 1. Վերցրո՛ւ մեկանգամյա օգտագործման թղթե ափսե:

Քայլ2. Ափսեի վրա նշի՛ր հիմնական գույները՝ օգտվելով նկարից:

Քայլ3. Խառնի՛ր հիմնական գույները, ստացի՛ր երկրորդական գույներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Քայլ 1

Քայլ 2

Քայլ 3

Քայլ 4

Գույներով կատարված նկարչական ստեղծագործությունը կոչվում է **գունանկար:**

Քայլ 4. Ափսեի հետնամասում հիմնական գույներով գրի՛ր անունդ, իսկ երկրորդային գույներով՝ ազգանունդ:

Քայլ 5. Ստեղծած աշխատանքդ պահի՛ր պանակում՝ ցուցադրության մասնակցելու համար:

Մինաս Ավետիսյան, Նատյուրմորտ, ձմերուկ

Կռահի՛ր հանելուկի պատասխանը, ապա պատկերի՛ր ալբոմում: Անվանի՛ր գույները:

Զրիպ ճակած թագուհի,
Թագը նրա՝ յոթ գույնի:

ԳՈՒՅՆ, ԳԻԾ, ՊԱՏԿԵՐ





Օգտվելով օրինակներից՝ կառուցի՛ր պատկերներ:

Ասա՛՝ քանի գիծ կա քո ստեղծած պատկերում:
Ասա՛՝ քանի գույն կա քո ստեղծած պատկերում:

Մատիտներով կառուցած պատկերը նկարի՛ր ալբոմում:
Գունավորի՛ր և ամբողջացրո՛ւ:

ՁԵՎ

Ձևը առարկայի արտաքին տեսքն է, ուրվագիծը՝ եզրագիծը:

Ձևը կարող է լինել երկրաչափական, կենդանական և բուսական:



Անհրաժեշտ են՝

թուղթ

սև գրաֆիտե մատիտ

ռետին

գունավոր մատիտներ

թաղքագրիչ

ՆԱԽԱԳԻԾ

Քայլ 1. Կարդա՛ Աթաբեկ Խնկոյանի «Գիշեր» բանաստեղծությունը:

Քայլ 2. Օգտագործելով ձևի տեսակները՝ նկարազարդի՛ր բանաստեղծությունը:

Քայլ 3. Օգտագործելով ձևի բոլոր տեսակները՝ պատկերի՛ր լուսինը, սարերը, տները, ծառերը, երկինքը:

Քանի՞ երկրաչափական և բուսական ձև ես պատկերել:

Քայլ 4. Ստեղծի՛ր կենդանական ձև ունեցող ևս մեկ պատկեր:

ԳԻՇԵՐ

Աթաբեկ Խնկոյան

Իջնում է գիշեր
Սարերի ուսին,
Փայլում է վերից
Կաթնագույն լուսին:

Վերից նայում է
Երկինքը ուրախ,
Քնած է գյուղը
Անհոգ ու խաղաղ:

Եկեք քննարկենք

Եղևնին կազմված է
երեք երկրաչափական
ձևից:
Ի՞նչ կստացվի,
եթե եռանկյունը փոխարինես
շրջանով:

ԳԻՏԵՍ, ՈՐ...

Թանգրամը *յոթ հարթ պատկերներից կազմված գլուխկոտրուկ է: Դրանք դասավորվում են որոշակի ձևով՝ մեկ այլ՝ ավելի բարդ պատկեր ստանալու համար (մարդ, տառ, թիվ կենդանի, կենցաղային առարկայի պատկեր և այլն):*

Դիտի՛ր տեսանյութը: Թանգրամի միջոցով ստեղծի՛ր որևէ պատկեր: Նկարի՛ր ալբոմում և գունավորի՛ր:

ՌԻԹՄ

Ռիթմը գծերի, գույների, ձևերի և պատկերների օրինաչափ կրկնությունն է, որը ստեղծում է շարժման տպավորություն: Ռիթմի միջոցով կարելի է մոտեցնել և հեռացնել պատկերները:

***Վան Գոգ**, «Երկուսը անտառում»*

***Հենրիկ Սիրավյան**, «Ժայռը»*

Անհրաժեշտ են՝

թուղթ

սև գրաֆիտե մատիտ

ռետին

գունավոր մատիտներ

թաղքագրիչ

սոսինձ

մկրատ

ՆԱԽԱԳԻԾ

1. Վերընթերցի՛ր Հովհաննես Թումանյանի «Ծիտը» հեքիաթը:
2. Առանձնացրո՛ւ այն հատվածը, որտեղ կա ռիթմ:
3. Պատկերի՛ր հեքիաթի հերոսներին:
4. Ստեղծի՛ր մատնային թատրոն և ներկայացրո՛ւ հեքիաթը ընկերներիդ հետ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Ուշադիր դիտի՛ր նկարը, ցույց տո՛ւր ռիթմը:
Հիմնավորի՛ր պատասխանդ:



Վասիլի Կանդինսկի,
«Գույնի հետազոտում»

Եկեք քննարկենք

Կարո՞ղ է փոխվել ռիթմը, եթե տրված պատկերում փոխենք գույները:

ՍՏԵՂԾՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 3

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ստեղծիր՝

- ***իրատեսական,***
- ***վերացական,***
- ***երևակայական աշխատանքներ:***

Խաչատուր Եսայան, «Ապրիլ»

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԻՐ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏԻՐ ՔԵՋ ՆՈՐՈՎԻ

Վալենտին Սերով, Դիմանկար







ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Իրատեսական պատկերներ ստեղծելիս հնարավորինս պահպանվում է նմանությունը բնօրինակի հետ:

Մարտիրոս Սարյան,
Նարդյուրմորդ



Վարթիթեր Կարապետյան,
Ինքնանկար

Դիտի՛ր և մեկնաբանի՛ր պատկերները:
Որքանո՞վ է արտացոլված իրական կյանքը:
Որտե՞ղ է եղել նկարիչը պատկերները ստեղծելիս:

Անհրաժեշտ են՝

թուղթ

սև գրաֆիտե մատիտ

ռետին

գունավոր մատիտներ

ՆԱԽԱԳԻԾ

Քայլ 1. Ուսումնասիրի՛ր քո շրջապատը, ընտրի՛ր որևէ առարկա կամ տեսարան:

Քայլ 2. Իրականացրո՛ւ քո նախագիծը՝ այն կապելով քո առօրյայի կամ իրական կյանքի որևէ դրվագի հետ:

Քայլ 3. Մեկնաբանի՛ր, թե ինչը գրավեց քեզ և ինչու:

ՊԱՏԿԵՐՈՒՄ ԲՆՕՐԻՆԱԿԻՑ

Պատկերի՛ր պարզ կառուցվածք ունեցող առարկաներ:

1. Բնօրինակի դիմաց տեղավորվի՛ր այնպես, որ կարողանաս ամբողջությամբ տեսնել և պատկերել այն:
2. Ճի՛շտ ընտրիր թղթի դիրքը:
3. Օգտագործի՛ր թղթի ողջ մակերեսը:
4. Պահպանի՛ր կառուցման կանոնները *(նմանություն, առարկաների չափեր):*
5. Ընտրի՛ր այն գույները, որոնք ամենամոտն են բնօրինակին:

Հակոբ Դալլաքյան

Վիկտորիա Հակոբյան

Իրատեսական կերպարվեստում իրերը ներկայացվում են այնպես, ինչպես իրականում կան:

Հակոբ Կոջոյան, «Սարերը Ծաղկաձորից»

ՎԵՐԱՑԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Վերացական կերպարվեստում պատկերի իրական տեսքը խախտվում է գույների, գծերի և ձևերի միջոցով՝ ստեղծելով այդ պատկերի տպավորությունը:





Դիտի՛ր և մեկնաբանի՛ր պատկերները:
Գտի՛ր նմանություններն ու տարբերությունները:

Անհրաժեշտ են՝

թուղթ

սև գրաֆիտե մատիտ

ռետին

գունավոր մատիտներ

յուղա-մատիտներ

թաղքագրիչ



ՎԱՐԺԱՆՔ

Փակ աչքերով, մատիտն առանց թղթից կտրելու՝ պատկերի՛ր որևէ առարկա:

Ստացված պատկերը գունավորի՛ր:



Պատկերի՛ր տարբեր տրամադրություններ փոքր թղթերի վրա: Համեմատի՛ր ստացված պատկերները և խմբավորի՛ր ըստ գույնի կամ տրամադրության:



Վրույր Գալստյան, Դիմանկար

Լիլի Մելքոնյան

Նանե Գյումիշյան

Կարինա Խաչատրյան

ՆԱԽԱԳԻԾ

Քայլ 1. Ստեղծի՛ր երկու դիմանկար՝
ա) իրատեսական,
բ) վերացական:

Քայլ 2. Օգտագործի՛ր տարբեր միջոցներ (գունավոր թղթեր, ծեփոն):

Քայլ 3. Հիմնավորի՛ր՝ դիմանկարներից որն է քեզ հոգեհարազատ:

ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

Կերպարվեստում երբեմն հանդիպում ենք իրականում գոյություն չունեցող պատկերներ, որոնք ստեղծագործական մտքի և երևակայության արդյունք են:



Բարի՛ ամպիկ, ճախրո՛ղ ամպիկ,
Ո՞ւր ես այդպես դու շտապում,
Երկնի ծովում դու լողալով
Դեպի ո՞ւր ես սլանում:

Անհրաժեշտ են՝

թուղթ

սև գրաֆիտե մատիտ

ռետին

գունավոր մատիտներ

թաղքագրիչ

ՎԱՐԺԱՆՔ

Նայի՛ր ամպերի պատկերներին:
Ո՞ր ամպն ինչի՞ ես նմանեցնում:
Ստեղծի՛ր նոր, երևակայական պատկերներ՝ ավելացնելով տարբեր տարրեր:
Նույն վարժանքը կարող ես կատարել՝ նայելով երկնքում լողացող ամպերին:

ՆԱԽԱԳԻԾ

Քայլ1. Հորինի՛ր որևէ առարկա:
Քայլ2. Ձևավորի՛ր միջավայրը:
Քայլ3. Վերնագրի՛ր աշխատանքդ և մեկնաբանի՛ր:

«Չիպոլինոյի արկածները», գրքի նկարազարդող՝ Եվգենի Գալեյ

Յացեկ Ջերկայ, «Կախարդական աշխարհ»



Դիտիր մուլտֆիլմը և ստեղծիր քո «Սուտլիկին»:

ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

որոշակի կերպարի կամ ձևի ստեղծում է՝ նորովի համադրմամբ:

Լրացրու միտքը:

Նկարելու միջոցով ես կարող եմ ճանապարհորդել դեպի լուսին:

Նկարելու միջոցով ես կարող եմ...

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

ՄՈԴՈՒԼ 4

ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ

Հավաքի՛ր և ձևավորի՛ր քո թղթապանակը (պորտֆոլիո):

Խմբով մասնակցի՛ր ցուցադրություններին:

Առաջարկի՛ր ցուցադրության արդյունավետ տարբերակներ:

ՊԱՏՐԱՍՏՎԻՐ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ. ԲԱՑԻՐ ՊԱՀՈՑԴ



ԹՂԹԱՊԱՆԱԿ

Թղթապանակը (պորտֆոլիոն) ավարտուն աշխատանքների հավաքածու է: Այն պարունակում է տեղեկույթ քո աշխատանքների, նաև հնարավորությունների մասին:

Թղթապանակն արտացոլում է ուսումնառության ընթացքում քո արձանագրած հաջողությունները:

Անհրաժեշտ են՝

ստվարաթուղթ

թափանցաթերթեր

գունավոր թղթեր

սոսինձ

մկրատ

թաղքագրիչ

գունավոր գրիչներ

ձևավորման համար նյութեր

ՆԱԽԱԳԻԾ

Ստեղծի՛ր քո թղթապանակը

Քայլ 1. Ձևավորի՛ր անվանաթերթ *(քո անունը, ազգանունը, տարիքը և դասարանը, ուսումնասիրվող առարկան):*

Քայլ 2. Առանձնացրո՛ւ բաժինները.

- ուսումնասիրվող թեմաներ,
- ընթացիկ աշխատանքներ,
- ավարտուն աշխատանքներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Քայլ 1

Քայլ 2

Քայլ 3





Հավաքիր և ձևավորիր թղթապանակդ քո նախընտրած ձևով:

Աշխատանքներդ կոկիկ պահպանիր թղթապանակիդ մեջ:

Պանակ, Թղթապանակ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆՔ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ

Ցուցահանդեսին մասնակցելու համար ընտրիր քեզ ամենաշատը դուր եկած և ինքնուրույն կատարած աշխատանքը, որով ուզում ես ներկայանալ ցուցադրությանը:

Ներկայացվող աշխատանքդ բացահայտում է քեզ, ներդրած ջանքերդ ու ձեռքբերումներդ:

Անհրաժեշտ են՝

պարան

գնդասեղ

կոճգամ

ամրակ

փայտի կտոր

կախիչ

ձևավորման նյութեր

ՆԱԽԱԳԻԾ

Ցուցադրությունը կազմակերպեք ընկերներով

1. Ստեղծեք պայմաններ ցուցադրության համար:
2. Աշխատանքների համար պատրաստեք շրջանակներ (փայտի կտորներ, գունավոր կպչուն թղթեր, զարդանախշերով ժապավեններ և այլն):
3. Ցուցադրվող աշխատանքների միջև պահպանեք 10 սմ–30 սմ հեռավորություն:
4. Աշխատանքները ցուցադրեք սովորողների աչքերի մակարդակին համապատասխան:

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ուշադիր դիտիր ցուցադրվող յուրաքանչյուր աշխատանք:

Ցուցադրվող աշխատանքից պահպանիր առնվազն 50 սմ հեռավորություն:

Նկարից նկար տեղաշարժվիր հանդարտ քայլերով:

Լսիր ընկերներիդ մինչև վերջ:

Համեմատիր աշխատանքները:

Ներկայացրու աշխատանքդ

- Ինչ ես նկարել:
- Ինչ նյութեր ես օգտագործել:
- Ինչ տարրեր և սկզբունքներ ես կիրառել:
- Ինչու ես ընտրել այդ աշխատանքը:

Փորձիր նկարների միջոցով հասկանալ քեզ և ընկերներիդ:
Ո՞ւմ աշխատանքը հավանեցիր և ինչու:
Հաջորդ ցուցադրության ժամանակ ինչն այլ կերպ կանեիր:

Ցուցասրահ

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

ՍՈՂՈՒԼ 5

Ներկայացրո՛ւ կերպարվեստի գարրերը:

Դասակարգի՛ր աշխատանքները՝ ըստ տեսակների:

Մեկնաբանի՛ր և վերլուծի՛ր ընկերներիդ աշխատանքները:

Վան Գոգ,
«Աստղային գիշեր»

Վալենտին Սերով,
«Դեղձերով աղջիկը»

ՆԿԱՐԱԳՐԻՐ, ՄԵԿՆԱԲԱՆԻՐ, ՎԵՐԼՈՒԾԻՐ, ԱՐԺԵՎՈՐԻՐ

Վարդգես Սուրենյանց,
«Ասպետ կինը»

Սանդրո Բոտիչելլի,
«Վեներայի թագավորությունը»

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

Մարտիրոս Սարյան,
«Հայաստան»

Քնարիկ Հովհաննիսյան,
«Խաղաղություն իմ երկրին»

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացրո՛ւ ընկերոջդ աշխատանքը

1. Նշի՛ր հեղինակին:
2. Ի՞նչ է պատկերված:
3. Ի՞նչ նյութեր և միջոցներ են օգտագործվել:
4. Կերպարվեստի ո՞ր տարրերն են օգտագործվել:
5. Աշխատանքում ո՞ր գույներն են գերակշռում՝ տա՞ք, թե՞ սառը:
6. Աշխատանքը իրատեսական՞ է, վերացական՞, թե՞ երևակայական:
7. Քո կարծիքով աշխատանքն ավարտո՞ւն է, թե՞ ոչ:
8. Եթե հեղինակը դու լինեիր, ի՞նչն այլ կերպ կպատկերեիր:

Երեխաների իրավունքներին նվիրված պաստառ

Ստեղծիր խորհրդանիշ, որն արտացոլում է՝

- ***սեր,***
- ***խաղաղություն,***
- ***հանդուր-ժողականություն,***
- ***պաշտպան-վածություն,***
- ***բնապահպանու-թյուն և այլն:***

Կարող ես ստեղծածդ աշխատանքի միջոցով խոսել աշխարհի երեխաների հետ:

Ներկայացրու աշխատանքդ:

Պաբլո Պիկասո, «Խաղաղության աղավնի»

Նկարագրել
Մեկնաբանել
Վերլուծել
Արժևորել

Արձագանք
Ընկալում

ԿԱՊԱԿՑՈՒՄ

ԱՐՎԵՍՏ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳՅՈՒՏԵՐ

ՄՈԴՈՒԼ 6

Ներկայացրո՛ւ աշխատանքներդ նորովի:

Վերլուծի՛ր, թե ինչ նյութեր և միջոցներ է օգտագործում նկարիչը, քանդակագործն ու ճարտարապետը:

Ղուկաս Զուբարյան,
«Մեսրոպ Մաշտոց և Կորյուն»

«Հուշակոթող Հայոց այբուբենին», Օշական

ՊՏՏՒՐ ԺԱՄԱՆԱԿԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆԻՎԸ

«Հայոց այբուբենի հուշարձան», Ապարան

«Հայոց Այբուբեն», Էջմիածին

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Տառերը կարող ենք և՛ գրել,և՛ նկարել:
Մեր հին գրքերում՝ մատյաններում, հանդիպում են գույնզգույն թռչուններով ու բույսերով զարդարված բազմաթիվ տառեր, որոնք կոչվում են թռչնագրեր:

Անհրաժեշտ են՝

թուղթ

սև գրաֆիտե մատիտ

ռետին

գունավոր մատիտներ

թաղքագրիչ

գունավոր գրիչներ

ՎԱՐԺԱՆՔ

Ստեղծիր բացիկ՝ օգտագործելով թռչնագրերը:

Հավերժության մեր ճամփան
Այբուբենն է մեսրոպյան,
Ուժ է տալիս մեր բազկին,
Միասնություն մեր ազգին:

Գևորգ Էմին

Վայելչագրության հեղինակ՝ Էմմա Թումանյան

1. Կարդա՛ բանաստեղծությունը և յուրաքանչյուր տող ներկայացրո՛ւ նկարի տեսքով:
2. Քո անվան առաջին տառը ձևավորի՛ր քո տարբերակով:
3. Կարող ես օգտագործել ծեփոն, գունավոր թղթեր, ստվարաթղթեր, գելային գրիչներ, սոսինձ, մկրատ, կոճակներ, ուլունքներ, չորացած ծաղիկներ և այլն:

ԿԱՊԱԿՑՈՒՄ

ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Տարբերակի՛ր արվեստի տեսակ-ները:

Ներկայացրո՛ւ գիտելիքներ արվեստի պատմությունից:

Արտահայտի՛ր կարծիք հայազգի արվեստագետների ստեղծագործությունների մասին:

ՄՈԴՈՒԼ 7

Կլոդ Մոնե,
Տպավորություն. «Ծագող արև»

Հովհաննես Այվազովսկի,
«Իններորդ ալիք»

Վարդգես Սուրենյանց, «Սուրբ Հռիփսիմե եկեղեցի»

ԲԱՑԱՀԱՅՏԻՐ ԱՐՎԵՍՏԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ



Միքելանջելո
Բուոնարոտի, Դավիթ

Խոյակ, Երևան՝
Հանրապետության հրապարակ

ԴԻՏԻՐ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔԻՐ

Աշոտ Հովհաննիսյան,
«Ինքնանկար»

Վինսենթ վան Գոգ,
«Ցորենի արտ կիպարիսներով»

Թորոս Ռոսլին,
«Ավետում»

Պողոս,
Խաչքար
Գոշավանքում

Եկեք քննարկենք

Քո կարծիքով ո՞րն է գաղտնիքը, որ այս արժեքները տարբեր ժամանակներից հասել են մեզ:

Սուրբ Աստվածածին եկեղեցի, Նորավանք

Ռաֆայել Իսրայելյան, Սարդարապատի հուշահամալիր

Գևորգ Բաշինջաղյան, «Անձրևային օր Սևանում»

Միքելանջելո Բուոնարոտի, «Հրեշտակ»

ՎԱՐԺԱՆՔ

Ներկայացված աշխատանքներից առանձնացրո՛ւ քանդակ-ները, նկարները և ճարտարապետական կառույցները:

ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ինչ է պատկերում նկարիչը:
Ինչ է քանդակում քանդակագործը:
Ինչ է նախագծում ճարտարապետը:

Հակոբ Հովնաթանյան, «Նապալյա Թեումյանի դիմանկարը»

Նկարիչը մատիտով և վրձնով թղթի կամ կտավի վրա ստեղծում է գեղեցիկ աշխատանքներ:

Քանդակագործը տարբեր նյութերից կերտում է տարբեր չափերի ծավալային աշխատանքներ:

Ճարտարապետը նախագծում է տաճարներ, եկեղեցիներ և այլ կառույցներ:

Նկարիչը, քանդակագործը և ճարտարապետը արվեստի գործիչներ են:

Ղուկաս Չուբարյան, «Մխիթար Գոշ»

Ալեքսանդր Թամանյան, Երևանի օպերայի և բալետի թատրոնի շենքը

Ուշադիր դիտիր և համեմատիր, գտիր նմանություններն ու տարբերությունները:



Պաբլո Պիկասո,
«Ինքնանկար»





Մարտիրոս Սարյան,
«Ինքնանկար»

Կիսիր պատկերները: Համադրիր առանձնացված հատվածները և ստացիր նոր պատկերներ: Վերնագրիր և ներկայացրու:

Իսահակ Լևիտան, «Աշուն»

Գևորգ Բաշինջաղյան, «Սևան»



Պոլ Սեզան, «Նատյուրմորտ»

Գրիգոր Խանջյան,
«Նատյուրմորտ»

Մարդկության պարտությանը ճանապարհում ենք նաև արվեստի միջոցով:

ԿԱՊԱԿՑՈՒՄ

ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈԴՈՒԼ 8

Ներկայացրո՛ւ՝ ինչով է արվեստի ստեղծագործությունը նման կամ տարբեր իրականությունից:

Ներկայացրո՛ւ մշակութային հատկությունները՝ ըստ նշանակության:

Բե՛ր օրինակներ՝ կարևորելով արվեստի դերը:

ԿԱՄՐՁԻՐ ԱՐՎԵՍՏՆ ՈՒ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԺԵՎՈՐԻՐ ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ՔՈ ԿՅԱՆՔՈՒՄ

ՊԱՀՊԱՆԻՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Ընտրիր համապատասխան հագուստ միջոցառմանը ներկայանալու համար՝ բացառելով սպորտային համազգեստը:

Ուղղիր քեզ հետաքրքրող հարցերն էքսկուրսավարին. հիշիր «կախարդական» բառերի մասին *(խնդրում եմ, ներեցեք, շնորհակալություն):*

Հաղորդակցվիր ցածր ձայնով:

Ցուցասրահում շրջելիս դրսևորիր հանգիստ և հավասարակշռված վարք:

Անջատիր բջջային հեռախոսդ:

Ցուցանմուշները դիտելիս դանդաղ պտտվիր դրանց շուրջը և նայիր բոլոր կողմերից:

Նկարներին և ցուցանմուշներին ձեռք տալ խորհուրդ չի տրվում. դրանք կարող են ընկնել և վնասվել՝ վտանգելով նաև քեզ:

Ցուցադրվող աշխատանքներից պահպանիր սահմանված հեռավորությունը (առնվազն 50 սմ):

ԱԶԴԱԳԻՐ

Ուշադիր եղել ես փողոցներում կամ հեռուստատեսությամբ հրապարակվող այն հայտարարություններին, որոնք տեղեկացնում են թատրոնի, երաժշտական, նկարչական և այլ միջոցառումների մասին:

Դիտիր և արձագանքիր

Ուշադիր դիտիր ազդագիրը.

1. անվանիր ներկայացման անվանումը, վայրը, ժամը,
2. ինչպես է նկարիչը առանձնացրել ներկայացման վերնագիրը,
3. ըստ պատկերների՝ կռահիր ներկայացման բովանդակությունը:

Պատմիր քո այցելած ցուցասրահի կամ թանգարանի մասին:
Խոսիր ընկերներիդ հետ տպավորություններիդ մասին:

1. Նշիր վայրի անվանումը:
2. Ճրբ և ո՞ւմ հետ ես եղել այնտեղ:
3. Ինչո՞ւ ես այն մշակութային վայր համարում:
4. Ի՞նչ հետաքրքիր տեղեկություն ունես դրա մասին:
5. Ի՞նչն ամենից շատ քեզ դուր եկավ այնտեղ:

ՆԱԽԱԳԻԾ

1. Բաժանվեք խմբերի:
2. Ընտրեք մայրենիից ձեզ ծանոթ որևէ հեքիաթ:
3. Ընտրեք նախագիծն իրականացնելու նյութերը:
4. Կատարեք աշխատանքի բաժանում:
5. Հստակեցրեք յուրաքանչյուր խմբի անելիքը:

Առաջին խումբ: Ստեղծեք ազդագիր, նշեք բեմական ներկայացման կամ ցուցադրության օրն ու ժամը, վերնագիրը, թեմային առնչվող պատկերները կամ տեսարանները:

Երկրորդ խումբ: Մեծ չափսի թղթերի վրա պատկերեք հեքիաթային տեսարաններ:

Երրորդ խումբ: Պատկերեք հեքիաթի հերոսներին մատնային թատրոնի համար:

Չորրորդ խումբ: Ծեփոնից կերտեք հեքիաթի հերոսներին:

Հինգերորդ խումբ: Դերային խաղի համար ստեղծեք հերոսների դիմակներ:

Ստեղծեք հրավիրատոմսեր ձեր ծնողների և ուսուցիչների համար:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Արդարացնե՞ն քո սպասելիքները:
Ի՞նչ սովորեցիր քո կատարած աշխատանքից:
Հեշտությա՞մբ կատարեցիր հանձնարարված ստեղծագործական աշխատանքը:
Ի՞նչ զգացիր ինքնուրույն աշխատելիս:
Ի՞նչ զգացիր խմբով աշխատելիս:

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ

1. Անվանի՛ր այն նյութերն ու միջոցները, որոնք օգնեցին քեզ կատարելու բազմաբնույթ աշխատանքներ:
2. Կերպարվեստի ո՞ր տարրերն ես օգտագործել՝ թեմատիկ աշխատանքներ ստեղծելիս:
3. Ո՞ր արտահայտությունը կերպարվեստի ո՞ր տեսակին է վերաբերում:
   - Ծաղիկներն այնքան բնական են նկարված, որ քեզ թվում է՝ զգում ես դրանց բույրը:
   - Հետաքրքիր է, այս պատկերում օգտագործված են միայն երկրաչափական պատկերներ:
   - Այս ի՞նչ հետաքրքիր նկար է. գոյություն ունի՞ արդյոք իրականում նման կերպար:
4. Օգտվելով թղթապանակից՝ խոսի՛ր հաջողություններիդ և դժվարություններիդ մասին:
5. Ի՞նչ անվանի արվեստագետների հետ ծանոթացար: Նրանց ո՞ր գործերն են հատկապես տպավորվել քո մեջ:
6. Կազմակերպի՛ր ցուցադրություն քո բակում, տանը:
7. Պատրաստի՛ր ցուցանակ՝ քո քաղաքի (գյուղի) վերաբերյալ, որ այն գրավի զբոսաշրջիկներին:
8. Ի՞նչ նոր եզրույթներ սովորեցիր:
9. Վերցրո՛ւ նոթատետրդ և կատարի՛ր գրառումներ՝ ի՞նչ ես սովորել ուսումնական տարվա ընթացքում.
   1. Ես սովորեցի...
   2. Հետաքրքիր էր...
   3. Դժվար էր...
   4. Ես հասկացա, որ...
   5. Ես կարողացա...
   6. Ինձ զարմացրեց...
   7. Կերպարվեստն ինձ օգնեց, որ ....

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՑԱՆԿ

գծանկար	*գրաֆիկական միջոցներով հարթության վրա ստեղծված պատկեր*
գունանկար	*գույներով կատարված նկարչական ստեղծագործություն*
երևակայություն	*որոշակի կերպարի կամ ձևի ստեղծում՝ նորովի համադրմամբ*
ընկալել	*հասկանալ, իմանալ, յուրացնել, ըմբռնել*
թղթապանակ (պորտֆոլիո)	*աշխատանքների պահոց*
իրական	*իսկական*
իրատեսական	*բնօրինակի հետ նույնական*
ճենապակի	*խեցեգործական արտադրանք, օգտագործվում է գեղարվեստական իրերի արտադրությունում*
վերացական	*1. առօրյա կյանքից՝ իրականությունից կտրված* *2. իրական պատկերի խախտված տեսք*
վրձին	*կոթին ամրացված մազափնջով գործիք նկարելու համար*
ցուցանմուշ	*ցուցահանդեսում, թանգարանում ցուցադրվող առարկա*
ցուցասրահ	*ցուցադրությունների սրահ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈԴՈՒԼ 1. ՍՏԵՂԾՈՒՄ
ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐ 4
Թուղթ 6
Սև գրաֆիտե մատիտ 10
Գունավոր մատիտներ և յուղամատիտներ 12
Ծեփոն 14

ՄՈԴՈՒԼ 2. ՍՏԵՂԾՈՒՄ
ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ՏԱՐՐԵՐ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 16
Գիծ 18
Գույն 20
Գույն, գիծ, պատկեր 22
Ձև 24
Ռիթմ 26

ՄՈԴՈՒԼ 3. ՍՏԵՂԾՈՒՄ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 28
Իրատեսական կերպարվեստ 30
Վերացական կերպարվեստ 32
Երևակայական կերպարվեստ 34

ՄՈԴՈՒԼ 4. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
ՎԵՐԱՆԱՅՈՒՄ ԵՎ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ 36
Թղթապանակ 38
Պատրաստվում ենք ցուցահանդեսի 40
Ցուցադրություն 41

ՄՈԴՈՒԼ 5. ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ
ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ 44

ՄՈԴՈՒԼ 6. ԿԱՊԱԿՑՈՒՄ
ԱՐՎԵՍՏ, ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԳՅՈՒՏԵՐ 46
Արվեստ և տեխնոլոգիաներ 48

ՄՈԴՈՒԼ 7. ԿԱՊԱԿՑՈՒՄ
ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ 50
Էսի՛ր և արձագանքի՛ր 52
Արվեստի պատմություն 54

ՄՈԴՈՒԼ 8. ԿԱՊԱԿՑՈՒՄ
ԱՐՎԵՍՏԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 56
Պահպանի՛ր կանոնները մշակութային վայրերում 58
Ազդագիր 59

ՆԱԽԱԳԻԾ 60
ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ 61
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԲԱՌԱՑԱՆԿ 62

ՄԱՐԻԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՄԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ, ԱՐԱՔՍՅԱ ԱՆԱՆՅԱՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

2

Հանրակրթական հիմնական դպրոցի
2–րդ դասարանի դասագիրք

Հրատարաչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Ձևավորումը՝ Արևիկ Հակոբյանի

Օգտագործված նկարներ

Էջեր 1, 2, 8, 27՝ Իրինա Գասպարյան, էջեր 5, 7, 13, 15, 17, 22, 31, 32, 37, 41, 57՝ «Լույս աշխարհ» արվեստի դպրոց, էջեր 6, 45՝ Տիգրան Սահակյան, էջեր 47, 52, 53, 54՝ «Զանգակ» հրատարակչության արխիվ:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70×100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 4 տպ. մամուլ
Հիմնական տառատեսակը՝ Ghea Arpi Sans

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ
9 789939 990200
ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
www.zangak.am
www.book.am